



ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ

Ֆիզիկական անձանց «ԴԻՍԿՈՆՏԱՅԻՆ» ժամկետային ավանդի

թ. _____

"__" _____ 20 թ.

«Արդշինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս _____

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և _____

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է _____

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», պարտավորվում է սույն պայմանագրում նշված ժամկետում վերադարձնել Ավանդի գումարը և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանից:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ _____ (գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույթը՝ _____ տարեկան: (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.4. Ավանդի վերադարձման ժամկետը՝ "____" _____ 20 թ.

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ _____ ավանդային հաշիվը: Այն դեպքում, երբ *Ավանդատուն* ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել Ավանդի գումարը, ապա այդ գումարը փոխանցվում է ցպահանջ ավանդների հաշվին առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման, և դրանց վրա հետագա տոկոսների հաշվեգրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույքաչափով, պայմաններով և կարգով:

1.6. Ավանդի տոկոսների վճարումը՝ ավանդի ձևակերպման պահին:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. *Բանկը* նշված ժամկետը լրանալուց հետո պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին* Ավանդը այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.3. Ավանդային հաշվի տնօրինման իրավունքն այլ անձի կարող է փոխանցվել օրենքով սահմանված կարգով հաստատված լիազորագրով:

2.4. Ավանդի կանխիկ մուտքագրումը հավաստվում է բանկային փաստաթղթով (ստորագրված և կնքված դրամարկղի մուտքի անդորրագիր կամ ստորագրված և դրոշմակնքված մեմորեալ օրդեր), առանց որի սույն պայմանագիրը առջինն է: Բանկը պարտավոր է, օրենքով սահմանված կարգով, առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել հաշվի քաղվածք՝ եթե հաշվետու ժամանակահատվածում տվյալ հաշիվը դեբետագրվել (և) կամ կրեդիտագրվել է:

2.5. Ավանդն անկանխիկ ներդնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), Ավանդի մուտքագրումը հավաստվում է Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը:

2.6. Սույն պայմանագրի 2.4. և 2.5 կետերով նախատեսված քաղվածքները՝ Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա, տրամադրվում են

- առձեռն
- փոստի միջոցով _____ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով _____ /e-mail/

2.6.1. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.6. կետով սահմանված պայմաններով:

2.7. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացած հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.8. Բանկային Ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը Բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

2.9. Այն դեպքում, երբ Ավանդը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը կատարում է նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ ելնելով ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափից, իսկ դրա արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային ավանդից, որից հետո մնացած մասը վերադարձվում է Ավանդատուին:

2.10. Այն դեպքում, երբ ավանդի մի մասը Ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Ավանդի վերադարձվող մասի նկատմամբ Բանկը կատարում է նախկինում վճարած տոկոսների վերահաշվարկ՝ ելնելով ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույքաչափից, իսկ դրա արդյունքում ավել վճարված տոկոսագումարները պահվում են ժամկետային Ավանդի վերադարձվող մասից, իսկ Պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային Ավանդի մասով:

2.11. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

2.12. Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.13. Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Ավանդատուին հասանելիք տոկոսագումարը վճարելիս, համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, պահում (գանձում) է եկամտահարկի գումարը և այն փոխանցում է պետական բյուջե:

2.14. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.15. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.16. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին Բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով, տառերով) և արժույթը				
Երկարաձգման ամսաթիվը				
Մարման ամսաթիվը				
ավանդի ձևակերպման պահին վճարվող տոկոս				
Տոկոսադրույթը (թվերով և տառերով)				
Ստորագրություն	Ավանդատու			
	Բանկ Կ. Տ.			

* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.17. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույքներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով ամրագրված պայմանները:

ԲԱՆԿ

Հասցե _____

Հեռախոս _____

/ստորագրություն/

ԱՎԱՆԴԱՏՈՒ

Հասցե _____

Անձնագրի տվյալները _____

Հեռախոս _____

/ստորագրություն/